

---

---

ԺՈՂՈՎՐԴԱԳԻՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՐՏԱՅՈՂՈՒՄԸ  
ՊԵՐՃ ՊՌՈՇՅԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ

ԱՆՈՒՇԱԿԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ազգագրական գիտության գրավոր աղբյուրների շարքում իր ունեցած տեղով ու դերով առանձնանում է գեղարվեստական գրականությունը, որը վաղուց դարձել է տարբեր երկրների ազգագրագետների ուսումնասիրության առարկան: Ցավոք, դա չի կարելի ասել հայ իրականության համար, քանի որ մեզանում այս սկզբնաղբյուրը չի արժանացել ազգագրագետների պատշաճ ուշադրությանը: Դրանց անդրադարձել են սահմանափակ կերպով, որի պատճառով մեր գեղարվեստական գրականության մեջ ազգագրական հարուստ վկայությունները չեն դասդասվել, տիպաբանվել ու մեկնաբանվել, չեն դրվել գիտական շրջանառության մեջ: Առանձնանում է գեղարվեստական այն գրականությունը, որի հեղինակը կենցաղագիր է: Այս դեպքում նա հանդես է գալիս որպես ռեալ իրականությունից, կոնկրետ բանասացներից դաշտային նյութեր գրառողի՝ բանահավաքի դերով: Այդ նյութերն անձնական դիտարկումների ու ընկալումների, պատկերից ու հայրերից լսած գրառումների արդյունք են, որոնց բնորոշ է վստահություն ներշնչող արժանահավատություն: Գեղարվեստական նման գրականությունը հարուստ է բազմապիսի և բազմաժանր կենցաղային նկարագրություններով, որոնք ընդգրկում են ավանդական տնտեսական կենցաղը, նյութական մշակույթը, հասարակական-ընտանեկան կենցաղը և հոգևոր մշակույթը: Այս առումով առանձնանում է հայ գրականության XIX դարի նշանավոր դեմքերից մեկի՝ Պերճ Պոռշյանի (1837–1907) ստեղծագործությունը: Իր երկերում օգտագործած նյութերը Պ. Պոռշյանը գրի է առել XIX դարի երկրորդ կեսերին, ինչոր չափով ընդգրկելով նաև XIX դարի առաջին կեսը՝ իր լսածի վրա հենվելով: XIX դ. մի ժամանակաշրջան էր, երբ դեռևս բավական անադարտ պահպանվել էին սերնդից սերունդ փոխանցված ավանդական կենցաղը, ընտանեկան ծեսերն ու արարողությունները, ժողովրդական տոներն ու հավատալիքները: Պ. Պոռշյանի ստեղծագործությունների շոնդայից հաջողությունը, կարծում ենք, պայմանավորված էր նաև դրանցում եղած ազգագրական հարուստ նյութերով, ուշագրավ ավանդություններով, լեզվառճով ու ժողովրդական բանահյուսության բազմաժանր հարուստ նյութերով, որոնց շնորհիվ ընթերցողի աչքերի առջևով անցնում է հայ էթնիկական հանրության ավանդական կենցաղի ու մշակույթի ուշագրավ դրվագները՝ շեշտված ռեզիտնալ ինքնատիպությամբ և առանձնահատկությամբ: Դա մեր ժողովրդի ավանդական կենցաղամշակութային բարքերի ու սովորությունների արտահայտումն է գեղարվեստական արձակի միջոցով, որում առկա է հիշողության ու կորստի, կորցրածի խոր ցավն ու գյուղական կյանքի իրական պատկերը:

Չնայած Պ. Պռոշյանի ստեղծագործություններում եղած ազգագրական հարուստ նյութերի առկայությանը, այն դեռևս լիարժեք չի արժանացել ազգագրագետների ուշադրությանը: Հիշատակելի է 1907 թ. Ա. Եզեկյանի հրատարակած «Ազգագրությունը և Պերճ Պռոշյանը» մի թերթանոց հոդվածը, որտեղ նա գրում է. Պ. Պռոշյանի վեպերը պատկերացում են տալիս հատկապես արարատյան հայի նիստ ու կացի, սովորությունների, բարքերի, ծեսերի, նախապաշարմունքների վերաբերյալ<sup>1</sup>: Նկատենք, որ Ա. Ղանալանյանը, արժևորվել է Պ. Պռոշյանի վաստակը ժողովրդական բանահյուսության ասպարեզում: Գրողի կողմից օգտագործված ժողովրդական բանահյուսության հարուստ նյութերը նա տիպաբանել է չորս խմբի՝ ժողովրդական առածներ, ժողովրդական երգեր, աշուղական երգեր և ժողովրդական ավանդություններ՝ առանձին-առանձին տալով դրանց համառոտ բնութագրումը<sup>2</sup>:

Այսքանով էլ ավարտվում է այդ խոսույն վերնագրի տակ Պ. Պռոշյանի ազգագրական ու բանահյուսական ժառանգության արժևորումը, որն ամենևին պատկերացում չի տալիս քննարկվող հիմնահարցի վերաբերյալ: Հայ ազգագրության մեջ եղած այս բացն ինչ-որ չափով լրացնելու նպատակով ստորև կանդրադառնանք Պ. Պռոշյանի երկերում, մասնավորապես «Ցեցեր» վեպում եղած ազգագրական ու բանահյուսական նյութերի տիպաբանությանն ու արժևորմանը<sup>3</sup>:

Ընտանեկան կենցաղ: Այս ոլորտին վերաբերող ազգագրական վկայություններն ուշագրավ են նրանով, որ դրանց և այլ նյութերի միջոցով հնարավոր է դառնում վերականգնել XIX դ. հայոց ավանդական ընտանեկան կենցաղն իր բարդ ու բազմազան դրսևորումներով: Խոսելով այդ շրջանի գյուղական հարուստ խավերի բնակարանի և դրա ներսույթի մասին՝ Պ. Պռոշյանը գրել է. բնակարանն ուներ չորս սենյակ, որից երեքը ծառայում էին ընտանիքին, իսկ ամենից մեծը դահլիճն էր՝ բարձրաստիճան հյուրերի համար: Ներսի սենյակները կահավորված էին տեղական սովորույթի համաձայն. հողե հատակի վրա փռված էր եղեգե խսիր, վրան ծածկված հասարակ կարպետ կամ բրդի թաղիք, իսկ դահլիճը բացառություն էր կազմում, այն զարդարված էր կիսահայկական, կիսավրացական ճաշակով<sup>4</sup>: Ակնհայտ է, որ բնակարանն իր ներքին կահավորումով պահպանել էր իր ավանդական տեսքը, գյուղ թափանցած հարաբերությունները դեռևս չէին խաթարել բնակարանի ներսույթը կամ ավանդականն ու նորը հանդես էին գալիս կողք կողքի:

Պ. Պռոշյանը մանրամասն նկարագրում է նման բնակարանում տիրող բարքերն ու սովորույթները: Երբ ամուսինը դիմում է կնոջը Մարան ջան, թառյան ջան, կնիկ ջան և փաղաքջական այլ խոսքերով, դրանք «...գյուղի և գավառի ժո-

<sup>1</sup> Ա. Եզեկյան. Ազգագրությունը և Պերճ Պռոշյանը. «Ազգագրական հանդես», գ. 16, Թիֆլիս, 1907, էջ 204:

<sup>2</sup> Ա. Ղանալանյան. Պերճ Պռոշյանը և ժողովրդական բանահյուսությունը, Երևան, 1932, էջ 10:

<sup>3</sup> Անդրադարձել ենք նաև հեղինակի «Հունոն» վիպակում, պատմվածքներում, հուշերում ու հոդվածներում (Երկեր, կազմեց և առաջաբանը գրեց Ս. Մարինյանը, Երևան, 1987) եղած ազգագրական, բանահյուսական առավել ուշագրավ վկայություններին:

<sup>4</sup> Պ. Պռոշյան. Ցեցեր. Երկեր, էջ 29:

դովրդի հասկացողությամբ շատ ամոթ բան է. տղամարդին ի նշ կսագի իր կնոջ հետ ատամները բաց անել, հանաքներ անել, ջան ասել. տղամարդն ու վ, կանանց գործերի մեջ խառնվիլն ու վ, նրանց հետ վեր ու նիստ անելն ու վ. մարդը պետք է մարդ լինի...»<sup>5</sup>: Այս նկարագիրը XIX դ. ավանդական հայ ընտանիքում տիրող բարքերի՝ կնոջ ու տղամարդու միջև եղած հարաբերությունների կատարյալ պատկեր է: Մինչև իսկ տասնամյակներ անց, Հայաստանի տարբեր վայրերում տղամարդու կողմից կնոջը ոչ թե անունով, այլ հոր անունով կանչելը, դեռևս բավական լայն տարածում ուներ:

Պ. Պռոշյանն անդրադարձել է ամուսնական ավանդական արարողակարգին: Չնայած տան տղամարդու անսահմանափակ իշխանությունը տարածվում էր և ամուսնությունների վրա, այդուհանդերձ, դրանցում նկատելի դեր ուներ նաև կինը: Իհարկե, վճռական խոսքը պատկանում էր տղամարդուն, սակայն կինը կարող էր որոշ շտկումներ անել կամ ինչ-որ դեր խաղալ ամուսնությունների կազմակերպման գործում: Գրողը անդրադարձել է թե՛ մեկին և թե՛ մյուսին. Մամսոնը դիմելով Սոնային, ասում է. «... թե որ էգուց հերդ եզան նման ականջիցդ բռնի, տա մի գլավնու... տղի, դու ի նշ կանես, կարա՞ս ծպտուն հանիլ, կարա՞ս ս հակառակիլ»<sup>6</sup>: Գեղարվեստական արձակի միջոցով Պ. Պռոշյանը տվել է գյուղական ընտանիքներում XIX դ. դեռևս պահպանված բռնի ամուսնության այս նկարագիրը:

Ամուսնության հարցերում կնոջ ունեցած դերի մասին է վկայում Սոնայի հետևյալ խոսքերը. որոշել եմ հենց այսօր «... ամեն բան մորս ասել, ոտներն ընկնել, աղաչել, պաղատել, որ մի հնարքով հորս բան հասկացնի, մեր նշանը շուտ վրա բերի ու գեղիս շուն ու գիլանոնցից ինձ ազատի»<sup>7</sup>:

Երբ գույգը իրար համակրում էր, դա արտահայտվում էր նրանց մայրերի՝ միմյանց նկատմամբ ունեցած հարաբերություններում, որից ամուսինները կռահում էին բռնած գործի ձախողումը կամ բարեհաջող ավարտը: Տղայի և աղջկա մայրերը, գրում է Պ. Պռոշյանը, «...կտուց կտուցի տված՝ երկար գրույց էին անում և երկուսն էլ շատ ուրախ էին:

Համաձայնությունն երկուսի մեջը կայացել է»: Ծառի տակ նստած նրանց ամուսինները «...երկար ու բարակ խոստովանվելով իրարու կինարմատի մեծ ազդեցությունը»<sup>8</sup>: Ակնհայտ է կնոջ դերը ամուսնությունների կազմակերպման գործում, որն ընդունում էին նաև տղամարդիկ:

Պ. Պռոշյանն ակնարկներ ունի նաև դասային ամուսնությունների ու մերձավորների միջև եղած ամուսնական արգելքների վերաբերյալ: Սոցիալական տարբեր խավերի միջև ամուսնության որոշակի դժվարությունների, հաճախ ամուսնացողների կարծիքը շրջանցելու մասին է խոսում գրողի հետևյալ նկարագրությունը: Դիմելով ընտրած աղջկան՝ տղան ասում է, որ «...էգուց հերդ իր մուլքն էրվելուց ու կտրատվելուց ազատելու համար աչքերը հույս ա տալու, քեզ գիլանոց ռեխը գցելու»: Եթե դու «...գլավնու հարս դառնաս, հորդ ոչով չի կարող

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 31:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 56:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 61-62:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 66-67:

ասել, թե աչքիդ վերևն ունք կա, ձնից ու անձրևից ավել ձեր բակն ոչով չի ոտ դնիլ. գգիր-յասավուլի ձեն ձեր քուչումն էլ չի լավիլ»<sup>9</sup>: XIX դ. բնորոշ նման կենսակերպն իր տարբեր կողմերով երկար գոյատևեց հայերի ընտանեկան կենցաղում, որի առանձին վերապրուկներ կարելի է տեսնել նաև մեր ժամանակներում:

Ամուսնություններում խիստ ընդգծվել է գույզի և նրանց հարազատների սոցիալական վիճակը, հասարակության մեջ ունեցած դիրքը: «–Հազար հետ եմ քեզ հասկացրել,– ասում է տղան,– որ իմ հերը ձեր դռնովն անց չի կենալ. նա գիտի, որ դու մեր ատամի ծամը չես, նա իր ոտն իր կարպետից դուրս չի մեկնիլ»<sup>10</sup>:

Հայտնի է, որ հայոց ամուսնական արարողակարգերում խստորեն արգելվում է մերձավորների միջև ամուսնությունները, իսկ խախտելու դեպքում նրանք արժանանում են հասարակության արհամարհանքին: Ավելի վաղ փուլերում որպես սահման հաշվվում էր 5–6 աստիճանը կամ պորտը, որը հետագայում իջնում է 3–4 աստիճանի: Գեղարվեստական արձակի միջոցով Պ. Պոռոջյանն իր վեպի հերոսների բերանով դատապարտում է այդ երևույթը: Երբ գյուղացիներից մեկը ցանկանում է իր քեռու թոռանն ուզել իր տղային, նրան խիստ հանդիմանում են. «–Տո՛, գետինը մտնես, ես էդ լսել եմ, դու էդ ի՞նչ գլուխդ քարովն ես տալիս, ուզում ես քեռուդ թոռան ուզիլ տղիդ. բաս դու աստվածանից չես վախենում, գլխիդ կրակ կթափվի երկնքից ... մի տես ինչքան չհաս է, մեջն արյուն է խաղում»<sup>11</sup>: XIX դ. նման արհամարհանքն ու դատապարտումը ամուսնական կարգը խախտողների նկատմամբ վկայում է, որ դարերից եկող նորմերը դեռևս բավական կենսունակ էին: Հայոց եկեղեցու կողմից սահմանված կանոնակարգը, հասարակական կարծիքը, ավանդական ներփակ կենցաղը նպաստում էին հին բարքերի պահպանմանը: Մեր օրերում ազգակիցների միջև ամուսնությունները երբեմն կատարվում են 2–3 աստիճանում, որը հասարակության կողմից միանշանակ չի ընդունվում:

Պ. Պոռոջյանն անդրադառնում է նաև ամուսնական տարիքին ու հարսանյաց արարողակարգի մանրամասներին: Հայտնի է, որ ավելի վաղ փուլերում գույզին հաճախ ամուսնացնում էին դեռևս արքունքի չհասած տարիքում, որի արձագանքները պահպանվել էր նաև XIX դ. երկրորդ կեսերին և տեղ գտել Պ. Պոռոջյանի երկերում:

Չնայած աղջկա ծնողները մերժում են պատգամախոսներին, սակայն նրանց այցելությունները չեն դադարում: Աղջկա հայրը դժգոհում է, որ «.. երեք տարի ա իմ աղջկա ուզողները դուռս ջարդում են՝ չեմ տալիս, դռնովն եմ դուս անում, երթովն են մտնում. ես էլ չեմ տալիս, թե դեռ ջահել ա»<sup>12</sup>: Սակայն տղայի հայրը առարկում է, թե «Ո՞ր տեղի ջահելն ա, դու հիմիկվա ծեսերը գիտես ո՞չ, որ 13 տարեկան աղջիկ չեն թողնում տանը մնա...»<sup>13</sup>: Դա հստակորեն ընդգծվում է ժողովրդական հետևյալ արտահայտությունում. «... որ ոտդ 13 տարին դրիր, թե ոչ,

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 57:

<sup>10</sup> Նույն տեղում:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 77:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 48:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 48-49:

օրը մին ա, խնամախոսներդ՝ տասնումին»<sup>14</sup>: Պ. Պոռոշյանի հերոսներից մեկի խոսքերով՝ «...մեզանում 15–16 տարեկան հայրերն ու 13–14 տարեկան մայրերը սովորական երևույթ են»<sup>15</sup>:

XIX դ. դեռևս պահպանված, լիարժեք արքունքի չհասած ամուսնությունները պայմանավորված էին աշխատող ուժի պակասով, սոցիալ-տնտեսական պայմաններով, գյուղական կենցաղի հետամնացությամբ, ավանդական բարքերի պահպանվածությամբ և այլ հանգամանքներով: Երբ ավարտվում էին գյուղատնտեսական աշխատանքները, ինչի արդյունքում «Ամբարն այրուրով լիքը, կարասները գինվով փորերը տկզած, մառանը հազարավոր բարիքներով փքված, յուղն ու պանիրը կճուճ-բժուկից դուրս են թափվում. էլ ծակ փորով աման չի մնացել. վերի այվանումը մինչև առաստաղը բամբակի կորզովն է կիտվել, չանաքավոր է կանչում, կտավատը ձիթհանքումն է ճկում, ձեթ դառնում, քնջիթը բովվում է դայինխանումը, և մի քանի օրից... ձեթը պետք է տկերը լցվին ու Թիֆլիս դրկվին, ուրեմն էլ ջահելներին բախտավորելու ի՞նչ արգելք կա»<sup>16</sup>: Ծնողները կհայտնեն «...իրենց զավակների նշանը և մի երկու շաբաթից հարսանիքի հոգսը քաշեն»<sup>17</sup>:

Սովորութային իրավունքով, խոսք առնելուց և նշանդրեքից հետո փեսան իրավունք չունեի երևալ նշանածի հայրական տանը. ավանդական բարքերը դա խստորեն դատապարտում էին: Երբեմն ընտանիքի չամուսնացած աղջիկների օգնությամբ, հարմար պահին, փեսան գաղտնի տեսակցում էր իր նշանածի հետ: Երբ փեսան խախտում է ընդունված կարգը և հաճախում աներոջ տուն, վերջինս ասում է. «—Դու մեղավոր չես, որդի՛, աշխարհքն ա շուռ անցել, փչացել. մեր ժամանակը պտեիր, որ այթարոցով ետ ածեի, փեսեն աներանց շեմքից քթեթի (սարահարսին հազցնելու շորերը) հետ պետք է տուն մտներ: Բայց հիմի ամեն ինչ փոխվել ա, տեսնում ես՝ նշան էլ չես դրած, մի դարդակ խոսք ենք տվել, արևի շողքի պես, պուպուզ, տուն ես ընկել. վնաս չունի, ջահել էք, քեֆ քաշեցե՛ք, հիմիկվա սերը քաղցր կլինի»<sup>18</sup>: Ավանդական բարքերի խախտումը գայրացրել է աներոջը, սակայն նա լավ է հասկանում դրա անխուսափելիությունը և ստիպված է հաշտվել նոր իրողության հետ, «վնաս չունի» խոսքերով:

Հայկական ավանդական հարսանիքի ուշագրավ նկարագրություն է թողել Պ. Պոռոշյանը: Աղջկա հայրը՝ Հասրաթը, որը հայտնի էր իր հարստությամբ, հասարակության մեջ ունեցած տեղով ու դերով, հարսանիքին հրավիրել էր ոչ միայն հարազատներին ու բարեկամներին, այլև բազմաթիվ ուրիշ մարդկանց. «Արարատյան աշխարհում ընդհանրացած սովորության հակառակ՝ հարսանիքի ծախքը յուր վրա է առել Հասրաթն ինքը»<sup>19</sup>: Պ. Պոռոշյանը գրում է, որ «Երեք օր, ե-

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 56:

<sup>15</sup> Պ. Պոռոշյան. Հունոն.— Երկեր, էջ 521:

<sup>16</sup> Պ. Պոռոշյան. Ցեցեր, էջ 45:

<sup>17</sup> Նույն տեղում:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 167:

<sup>19</sup> Պ. Պոռոշյան. Պատմվածքներ.— Երկեր, էջ 502: Հայտնի է, որ մեր ավանդական հարսանիքներում տղայի կողմն էր հոգում աղջկա հոր տանն արվող հարսանիքի ծախսերի մեծ մասը, որը փոխհատուցվում էր հարսի բերած օժիտով:

րեք գիշեր է տևում մեր աշխարհի հարսանիքը, մի քանի անգամ ճաշկերույթներ և երեկույթներ են լինում, բայց ամենաճոխ պատրաստությունը, ամենահանդիսավոր ուրախությունը պսակաճաշն է, այն նշանավոր օրը, երբ փեսան ու հարսը սուրբ սեղանի առաջին թագավոր և թագուհի անուն կրած, նարոտը վզերին<sup>20</sup>, խաչը փեսայի գդակածալումը թագի փոխարեն բազմացրած, հաղթական հանդիսով շրջապատված, ոչ միայն մյուս ժամանակների համաձայն ազապներով ու մակարներով, այլև հասարակության մեջ ամենից հարգված անձինքներով և բոլոր հրավիրվածներով տուն են վերադառնում եկեղեցուց<sup>21</sup>:

Հարսանիքն արվում էր գլխատանը, որի արևելյան պատին, գորգերի տակ կանգնած են թագավորն ու թագուհին, իրենց խաչեղբոր և փեսեղբոր հետ: Թագավորն ու խաչեղբայրը ձեռքում ունեն վառված մեղրամուկեր, իսկ փեսայի եղբայրը՝ թուրը կախ, մի ափսեով միրգ և մի գավ գինի ունի բռնած: Քահանան բազմել է թագավորի աջ կողմը, իսկ խաչեղբոր կողքին, ըստ արժանավորության, բազմել են գավառի պաշտոնյաները: Մոտենում է ճաշի հանդիսավոր պահը, փլավը քաշեցին, բացեցին գինու նոր կարաս: Նախ, խմում են թագավորի և թագուհու կենացը, որից հետո թագավորը խաչեղբոր ու փեսեղբոր հետ մնում են կանգնած մինչև ճաշի ավարտը, իսկ թագուհուն երաժշտությամբ տանում են կանանց սենյակը, որտեղ վերջինիս բարեմասնությունների գովքն են ասում կանայք: Խնջույքի կառավարչի առաջարկով քահանան և աղջկա հայրը օրհնում են գույզին<sup>22</sup>:

Գեղարվեստական արձակի միջոցով ավանդական հարսանյաց ծեսի այս հակիրճ նկարագրությունը եզակի է մեր գեղարվեստական գրականության մեջ: Պ. Պոռոջյանը հստակ նկարագրում է մատուցվող ճաշատեսակները, ըմպելիքները, կենացների հաջորդականությունը, փեսայի՝ մակարներով շրջապատված լինելը, գույզի պարանոցին նարոտի առկայությունը և հարսանյաց արարողակարգի ուշագրավ այլ մանրամասներ:

Պ. Պոռոջյանն անդրադարձել է նաև ընտանեկան կենցաղում պահպանված չխոսկանության սովորույթին: «...հայի մեջ չխոսկանությունն ադաթ է»<sup>23</sup>, մինչդեռ «մեր չխոսկաններից ոչ մեկը նրանից չէր ամաչում», ինչը Պ. Պոռոջյանը բնութագրում է որպես «...նորանշանակ երևույթ մեր աշխարհի համար...»<sup>24</sup>:

<sup>20</sup> Նարոտը պատրաստում էին նաև սովարաթոթից, ուներ եռանկյան տեսք, պսակադրությունից հետո կախում էին գույզի պարանոցներից: Նարոտը հանդես էր գալիս որպես ժամանակավոր արգելք (տարբու): Քանի դեռ հոգևորականի ձեռքով չէր հանվել նարոտը, գույզը ամուսնական առաջատ մտնելու իրավունք չուներ: Նախկինում արգելքը 5-6 օր էր, իսկ ավելի ուշ՝ 3-4 օր: Պ. Պոռոջյանի մոտ հանդիպում ենք «...դեռ հարսն ու փեսայության նարոտը վզերիցս չվերցրած...» (նույն տեղում, էջ 486), «...արի տերտեր, քո ձեռքով կապած նարոտը վզիցս բաց արա, քո դրած խաչը գրակածալիցս հանիր» (նույն տեղում, էջ 516) արտահայտություններին, որոնք այլ վկայությունների հետ մեկտեղ խոսում են XIX դ. մեր հարսանյաց ծեսերում նարոտի լայն կիրառության մասին:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 502-503:

<sup>22</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 503:

<sup>23</sup> Պ. Պ ո ռ յ ա ն. Հունուն, էջ 358:

<sup>24</sup> Պ. Պ ո ռ յ ա ն. Ցեցեր, էջ 31:

Հայերի ընտանեկան կենցաղում չխոսկանությունը բավական երկար պահպանվեց, որը պայմանավորված էր ներընտանեկան բարքերով, սովորությանին իրավունքի առանձին նորմերի կենսունակությամբ: Մինչև իսկ մեր օրերում, մեկուսի ընկած գյուղական բնակավայրերում, պահպանվել է չխոսկանությունը՝ հատկապես քավորի և ավագ սերնդի նկատմամբ, որը դիտվում է հնագույն այդ սովորության վերապրուկային դրսևորում:

Երիտասարդական միություններ: Մեր գեղարվեստական գրականության մեջ Պ. Պոռժյանն առաջիններից էր, որ անդրադարձավ երիտասարդական միությունների կամ տղամարդկանց հասակային խմբերի խնդիրներին, դրանց տեղին ու դերին գրողն օգտագործում է «ընկերական խմբեր» տերմինը, որտեղ հասակակիցները քննարկում էին իրենց հուզող բազմազան հարցեր: Նա կիրառում է նաև «պատանեկան անմեղ զվարճախոսությունների ժողով» արտահայտություններ, որտեղ «...սրանք էլ իրանց հաշիվն ունեին – ո՛ւմ աղջիկն էր սիրուն, ո՛րը ո՛ւմ բախտ կլինի, ո՛վ կարող է Նազլուի աղջիկ Միրամի սիրտը գողանալ, Միրամի փոքր եղբոր ձեռքով նրան կարմիր խնձոր ուղարկել և այլն»<sup>25</sup>:

Պ. Պոռժյանը փորձել է անդրադառնալ երիտասարդական միությունների ներքին կառուցվածքին, դրանք դիտելով ոչ միայն երիտասարդության կոփման, դաստիարակման միջավայր, այլև գյուղական կյանքը կանոնակարգելու ավանդական եղանակներից մեկը: «Էս խմբակի մեջ, – գրում է նա, – ամեն մեկն էլ իր սրտի գաղտնիքը հայտնում էր. մեկը պարծենում էր, որ եթե չտան՝ կփախցնի, մյուսն ուխտում էր սուրբ Գարապետի պասն յոթը տարի պահել, եթե յուր սրտի առարկան իրան վիճակվի, մեկն ախ էր քաշում, մյուսը սիրտ էր տալիս, մի երրորդն էլ լուռ լսում էր»<sup>26</sup>: Այդ քննարկումների ժամանակ ի հայտ են գալիս երիտասարդների սրամտության, հնարամտության, իրավիճակն ըմբռնելու և դրանից դուրս գալու հնարավոր եղանակները: Երբ խոսքը հարուստ աղջկա մասին էր, սրամիտ ընկերները ծաղրում էին, թե ինչպես կարող էս «... հարուստների ատամներիցը Սոնա դուրս քաշել» կամ «...այ դու դարմանի տակի ջուր»<sup>27</sup> դրա համար էլ «ուրբաթախոս» էս դարձել<sup>28</sup>: Նույնքան դիպուկ է ընկերների հանդիմանանքին արժանացած երիտասարդի պատասխանը. «...հիմի թե ախպեր եք, էդ մի թևավորն էլ թողեք իմ ակնատի մեջն ընկնի, էդ մի աղջիկն ինձ բաժին հասցրեք»<sup>29</sup>:

Հայ ազգագրության մեջ հասակակիցների միությունների խնդիրների գիտական վերլուծությանը համառոտ անդրադարձել է Մտ. Լիսիցյանն իր Շատախի ազգագրական հետազոտմանը նվիրված աշխատանքում<sup>30</sup>: Այն հետազայում

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 26:

<sup>26</sup> Նույն տեղում:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 27:

<sup>28</sup> Նույն տեղում:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 28:

<sup>30</sup> Մ տ. Լ ի ս ի ց յ ա ն. Շատախի պատմագագրական ակնարկներ, Երևան, 1927:

դարձավ առանձին ուսումնասիրության խնդիր<sup>31</sup>, որտեղ հեղինակը, հենվելով գրավոր ու դաշտային նյութերի վրա, մանրամասն վեր է հանել միությունների խաղացած դերը հայ պատանիներին կյանքի համար նախապատրաստելու գործում, որից «... հետո միայն «երիտասարդ» տղաներն իրավունք էին նվաճում հասուն տղամարդ համարվելու և ամուսնանալու»<sup>32</sup>:

Երիտասարդական միությունների խնդիրներին անդրադարձել է նաև Ա. Մնացականյանը, դրանք կապելով Թուխ Մանուկների հետ: «... ինչպես յուրաքանչյուր ժողովուրդ, այնպես էլ հայ ժողովուրդը պատմական անհրաժեշտությամբ, անցյալ ժամանակներում ունեցել է հասակային դասեր, երիտասարդական կազմավորումներ, կտրիճվորաց եղբայրություններ (ընդգծումը մերն է – Ա. Պ.), որոնք անցյալում նպատակ են ունեցել հասարակությանը տալ լիարժեք, առողջ, խիզախ ու խելոք սերունդ: Եվ ահա, իր ժամանակի կրոնասոցիալական իրադրությունների համաձայն, այդ երիտասարդությունը դաստիարակվել է երևակայական հերոս-նախնիների և համապատասխան աստվածությունների օրինակով: Վերջիններս, անշուշտ, սկզբնապես տարբեր անուններով են կոչվել... իսկ հետագայում աստիճանաբար համախմբվել Թուխ Մանուկ անվան ներքո»<sup>33</sup>:

Թուխ Մանուկ հուշարձաններ: «Ցեցեր»-ում Պ. Պռոշյանն անդրադարձել է սրբավայր ուխտատեղիների ուշագրավ տիպերից մեկին՝ Թուխ Մանուկներին: Շուրջ մեկուկես դար է, ինչ չի դադարում այդ հուշարձանների վերաբերյալ եղած հետաքրքրությունը հայագիտության մեջ:

Նկարագրելով Արարատյան աշխարհի տարբեր գյուղերում պահպանված հնձանների ավերակները, Պ. Պռոշյանը նկատել է, որ դրանցում «...տորվել են ու մզվել մեր պապերի ձեռքով տնկած ու հասցրած խաղողները՝ Նոյ մեծ պապից սկսած մինչև մեր օրերը»<sup>34</sup>: Այդ ավերակների կույտը՝ Հնձանաբազր, նման չէ ոչ բերդի և ոչ էլ իջնանատան: Հսկայական թեղի ծառի ճյուղերն ամբողջովին ծածկել են ավերակը՝ անհնարին դարձնելով մարդու մուտքն այնտեղ: Սակայն թեղին չէր պատճառը, որ ոչ ոք այնտեղ չէր մտնում, այլ դրա համար կար երկու հիմնարար արգելքներ. «...թեղուն դիպչելը մեղք էր համարված. թեղին Թուխ-մանուկի տնկածն էր. գյուղի երեխան էլ գիտեր, որ թեղու ոչ մի ճեղքին դանակ, էտոց, կացին չպետք է դիպչեր, ապա թե ոչ արյուն դուրս կգար. թեղին հենց ինքը Թուխ-մանուկն ա, բարակ ոստերը Թուխ-մանուկի երակներն են, իսկ տերևները նրա գզգզված մազերն են»<sup>35</sup>:

<sup>31</sup> Տե՛ս Մ. В а р д а н я н. Традиции мужских возрастных групп у армян (конец XIX – начало XX вв.). – «Հայ ազգագրություն ու բանահյուսություն (Նյութեր և ուսումնասիրություններ)», գ. 12, Երևան, 1981:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 141:

<sup>33</sup> Ա. Մ ն ա գ ա կ ա ն յ ա ն. «Թուխ Մանուկ» հուշարձանների մասին. – ՊԲՀ, 1976, № 2, էջ: Վերատպվել է «Թուխ Մանուկ» ժողովածուում (Երևան, 2001, էջ 108. հղումներն՝ ըստ ժողովածուի):

<sup>34</sup> Պ. Պ ռ շ յ ա ն. ԑլեցեր, էջ 50:

<sup>35</sup> Նույն տեղում:



Ավանդության համաձայն, Թուխ Մանուկը պարսկական կրոնավորի որդի էր, որն ընդունել էր քրիստոնեություն: Հայրը խիստ զայրացել էր, հետապնդել որդուն, որպեսզի սպանի: Թուխ Մանուկը խնդրում է Աստծուն, որ իրեն ծառ դարձնի, կատարվում է նրա խնդրանքը: Նա ծառ է դառնում, իսկ զգգված մազերը վերածվում են ճյուղերի՝ արգելելով հոր մոտենալը: Մակայն նրա հայրը թրով քերծում է ծառի ճյուղերից մեկը, որի տեղում նկատելի է չորացած ու սնացած արյունը<sup>36</sup>:

Ավերակ չմտնելու երկրորդ արգելքը պայմանավորված էր հետևյալ ավանդությամբ. Հնձանաբազում օձերի թագավորը կառուցում է իր պալատը, որտեղ հավաքվում են հազարավոր օձեր, որոնք կռիվ են գնում Մասիսի ձորաթմբում կամ Արագածի Ամբերդի ձորի մեջ գտնվող թագավոր-օձերի վրա: Շատերը տեսել են օձի բերանում եղած բազմանիստ աղամանը, որը թագավոր-օձը երբեմն պահում էր նաև իր պոզերի մեջտեղը և թագի տեղ օգտագործում: Ժամանակ առ ժամանակ մայր թագավոր-օձը զվարճանում էր իր անզին գանձով: Օջախի օձերն իրենց բնի առջևից չեն հեռանում, տաքանում են արևի տակ և մարդկանց չեն վնասում<sup>37</sup>:

Ավանդությունն ազդարարում է, թե Հնձանաբազը «Թուխ-մանուկի տունն է»<sup>38</sup>, «—Մենեն Թուխ-մանուկի գորությունին...»<sup>39</sup>:

Թուխ Մանուկների վերաբերյալ ամփոփ նկարագրություն է թողել Գ. Սրվանձտյանը: Նրա վկայությամբ, Հայաստանում հազիվ թե գտնվի մի գյուղ, որ Թուխ Մանուկ չունենա, այն տարածված է նաև քաղաքների մեջ: «Ամենափոքրիկ մատուռ մը,— գրում է Գ. Սրվանձտյանը,— կամ առանց կավաշաղախի շարված քարերով շենք մը, որո մեջ տղա մ'անգամ չպարունակիր, խաչքար մը, ողջ կամ կոտրած, կամ գերեզմանաձև շենք մը, և ադոնց մեջ ճրագ ու խնկանոց, ուր կերթան բարեպաշտ կանայք և ցավագար կամ ախտավոր անձինք ձեթ և մոմ վառելու, խունկ ծխելու, ծունկ դնելով, կուրծք ծեծելով, լալով ու պաղատելով, իրենց ուխտը կը կատարեն: Թուխ Մանուկն այս է»<sup>40</sup>: Այս նկարագրության մեջ Գ. Սրվանձտյանը պատկերում է Թուխ Մանուկ հուշարձանի արտաքին տեսքը, ներսույթը՝ խաչքար, ճրագ ու խնկանոց, որտեղ հաճախում են ոչ միայն աղոթք անելու, այլև տարբեր հիվանդություններից բուժվելու նպատակով:

Գ. Սրվանձտյանն անդրադարձել է նաև պաշտամունքային այդ հուշարձանների առաջացման խնդրին, առաջ քաշելով մի քանի տեսակետներ. Թուխ Մանուկները «... ու եկեղեցյաց տեղ են եղեր: ... բարբարոսությունը քարոքանդ է ըրեր...» կամ «... հավատքի համար նահատակվողներու արյունը թափված կամ անոնց թաղված տեղերն եղած են...», «Եվ եթե թուխմանուկ կոչվելուն և անվան ուշադրություն տանք, թերևս լինին դոքա մանուկներ, խլված իրենց մայրերու ձեռ-

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 50-51:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 51:

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 58:

<sup>39</sup> Նույն տեղում, էջ 59:

<sup>40</sup> Գ. Սրվանձտյան և Գ. Գրոց ու բրոց.— Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 79:

քեն... մորթված քրիստոնեության անվան և սիրույն համար, թուխ գույն ստացած բոսորային արյան մեջ թաթախվելով...»<sup>41</sup>:

Կարծես թե Գ. Սրվանձտյանցն առավել հակված է երրորդ վարկածին, սակայն ակնհայտ է, որ Թուխ Մանուկների հետ կապված պաշտամունքը եղել է նվիրական և փոխանցվել սերունդից սերունդ:

Թուխ Մանուկ հուշարձանների վերաբերյալ առաջին գիտական ուսումնասիրությունը պատկանում է Ա. Մնացականյանին: Հենվելով գրավոր սկզբնաղբյուրների և Հայաստանի Հանրապետությունում լայն տարածում ունեցող այդ հուշարձանների վրա, հեղինակն անդրադարձել է այդ ինքնատիպ պաշտամունքային վայրերի առաջացման խնդրին, անցած փուլերին, կրած փոփոխություններին և մինչև մեր օրերը լայն տարածում ունեցող հավատալիքներին: Ըստ Ա. Մնացականյանի՝ «Ենթադրելի է, որ Թուխ Մանուկները նախաքրիստոնեական սրբավայրեր են եղել և հալածվել ու ավերվել են քրիստոնեության կողմից»<sup>42</sup>: «Թուխ» նշանակում է սև, իսկ «Մանուկ»՝ մանուկ կամ երիտասարդ, կտրիճ, քաջ, արի, ճարտար: Հենց այս իմաստով է այն ընկալված Թուխ Մանուկ դարձվածքում<sup>43</sup>: «Քրիստոնեությունը, – գրում է Ա. Մնացականյանը, – կատաղի պայքար մղելով հեթանոսական պաշտամունքների դեմ, չէր կարող խնայել նաև Թուխ Մանուկներին:

Ժողովուրդը, սակայն, իր հնամենի ավանդների, կենցաղային սովորույթների ուժով... չի դավաճանել Թուխ Մանուկներին: Հետագայում, երբ աստիճանաբար մեղմացվել է քրիստոնյա գործիչների պայքարը, հանդուրժելի են դարձել նաև Թուխ Մանուկները, երբեմն էլ արժանանալով վերակառուցման ու քրիստոնեականացման»<sup>44</sup>: Այս ամենի հետևանքով «Համապատասխան ուխտատեղիների հետ են կապվել ոչ միայն ծիսական արարողությունները, այլև համաժողովրդական հանդիսությունները՝ մրցույթներով, երգերով ու պարերով»<sup>45</sup>:

Թուխ Մանուկների՝ որպես պաշտամունքային վայրերի երկարակեցությունը պայմանավորված էր բնակչության մեջ ընդգծված հավատալիքներով, այդ հուշարձանների բազմաֆունկցիոնալությամբ:

Պ. Պոռոջյանը ժամանակին լավ էր հասկանում Թուխ Մանուկ հուշարձանների տեղն ու դերը, դրանցով պայմանավորված ժողովրդական ավանդությունների և հավատալիքների արժեքը:

Ժողովրդական բանավոր ստեղծագործություն: Պ. Պոռոջյանի «Ցեցեր»-ում բավական առատ են դարձվածքները, բառակապակցությունները, ասացվածքները, առածները, առակները, անեծքները և բանահյուսական տարբեր ժանրերին պատկանող այլ արժեքներ, որոնց մի մասի բովանդակային մեկնությունները տվել է ինքը՝ հեղինակը<sup>46</sup>: Ազգագրական նյութերի հետ դրանք յուրատեսակ

<sup>41</sup> Նույն տեղում, էջ 80:

<sup>42</sup> Ա. Մ ն ա ց ա կ ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 93:

<sup>43</sup> Նույն տեղում, էջ 94:

<sup>44</sup> Նույն տեղում, էջ 100

<sup>45</sup> Նույն տեղում, էջ 109:

<sup>46</sup> Հղում չունեցող բառակապակցությունների ու դարձվածքների մեկնությունը Պերճ Պոռոջյանին է:

համ ու հոտ են հաղորդում շարադրանքին՝ այն դարձնելով հետաքրքիր ու գրավիչ: Այդ նյութերի բովանդակային մեկնությունները նպատակահարմար է ներկայացնել այբբենական կարգով:

Ազոավի ձենը որ Աստված լսեր, Վարդավառին ձյուն կգար (Յեցեր, 208) – Խոպոտ, կոշտ ու կոպիտ: Ազոավի ձայն ասվում է վատ երգող, բաղաձայն մարդկանց, երբեմն էլ անշնորհք երգի վերաբերյալ<sup>47</sup>:

Ազոավները սև կհագնեն (88) – Եթե ինչ-որ բան այնպես չլինի:

Ազապ աղջիկն անկտրիլ շամամ ա (60) – Դեռ չգիտես նրա որակը (կույս լինելը)<sup>48</sup>:

Աղոթած էշ էին դառել (68) – Մոլորված, շվարած, անճարակ, անտարբեր<sup>48</sup>:

Աչքն արդար ավելի լավ է, քան սիրտը մեղավոր (Հունոն, 374) – Հավատա քո տեսածին և ոչ լսածին (մինչև աչքովդ չտեսնես, չհավատաս)<sup>49</sup>:

Բա իշի մշակ ենք (Պատմվածքներ, 497) – Անգետ, անբանիմաց մարդու ծանայող<sup>50</sup>:

Բակլան խաշած եմ ցանում (Յեցեր, 155) – Իր քահաճույքով, ցանկացած ձևով վարվել<sup>49</sup>:

Գիլի անունն է կոտրված, աղվեսներ կան, որոնք ոչխարը ողջ-ողջ են կուլ տալիս (Պատմվածքներ, 519) – Գայլի անունն է դուրս եկել, մինչդեռ աղվեսները աշխարհ են քանդում<sup>51</sup>:

Գայլի աչքերն էին աղվեսին վարպետ շինել (457) – Թեկուզ փորձված մարդու համար, գայլիք վտանգը ավելի նկատելի է<sup>52</sup>:

Գայլի ձեռքից պրծանք, արջի հանդիպեցինք (Հունոն, 292) – Ժողովրդի մեջ տարածված է մրից ելանք մրջուրն ընկանք, այսինքն՝ թեթև փորձանքից դուրս գալով, ավելի ծանր վտանգի մեջ ընկանք<sup>53</sup>:

Գեղ կանգնի գերան կկոտրի (Յեցեր, 69) – Գեղովի խոսքը մեծ արժեք ունի:

Գիլի ավետարաններդ ականջս չեն մտնում (Հունոն, 271) – Նրա գլխին խրատ կարդալը գայլի ավետարան է, իզուր է և անօգուտ<sup>50</sup>:

Գողն ինչքան կամեցել է թաքցնել իր գողացած աքաղաղը, բայց պոչը դուրս է մնացել (Յեցեր, 131) – Կեղծիքը, խաբեությունը, գողությունը հնարավոր չէ թաքցնել<sup>51</sup>:

Դարմանի տակի ջուր (27) – Շատ խորամանկ, ծածկամիտ, իր գործերը գաղտնի հաջողացնող մարդ<sup>52</sup>:

<sup>47</sup> Ա. Ս ու լ ք ի ա ս յ ա ն, Ս. Գ ա լ ս տ յ ա ն. Հայոց լեզվի դարձվածքաբանական բառարան (այսուհետ՝ Ա. Ս ու լ ք ի ա ս յ ա ն, Ս. Գ ա լ ս տ յ ա ն. ԴԲ), Երևան, 1975, էջ 1, հմմտ. Խ. Բ ա դ ի կ յ ա ն. Ուսումնական դարձվածքաբանական բառարան (այսուհետ՝ Խ. Բ ա դ ի կ յ ա ն. ՈՒԴԲ), Երևան, 2002, էջ 12:

\* Աստղանիշերով դարձվածքների մեկնաբանությունը կատարել է Խ. Բ ա դ ի կ յ ա նը, որին հայտնում ենք խորին շնորհակալություն:

<sup>48</sup> Ա. Ս ու լ ք ի ա ս յ ա ն, Ս. Գ ա լ ս տ յ ա ն. ԴԲ, էջ 15, հմմտ. Խ. Բ ա դ ի կ յ ա ն. ՈՒԴԲ, էջ 29:

<sup>49</sup> Ա. Ս ու լ ք ի ա ս յ ա ն, Ս. Գ ա լ ս տ յ ա ն. ԴԲ, էջ 103:

<sup>50</sup> Նույն տեղում, հմմտ. Խ. Բ ա դ ի կ յ ա ն. ՈՒԴԲ, էջ 125:

<sup>51</sup> Ա. Ս ու լ ք ի ա ս յ ա ն, Ս. Գ ա լ ս տ յ ա ն. ԴԲ, էջ 173:

<sup>52</sup> Խ. Բ ա դ ի կ յ ա ն. ՈՒԴԲ, էջ 158:

Ես քո գերեզմանի վրա գինի լցնեմ (Հունոն, 281) - Անեծք՝ մահացած տեսնել, թաղել (մեռնես, թաղեմ քեզ)<sup>53</sup>: Մինչև գյուղիս ծերերի գերեզմանին գինի չածեմ, ինքս մեռնողը չեմ (282):

Եկավ զատիկը, գեղի պնչիցը հանեց (Յեցեր, 68) – Հարամ արեց:

Եկել է մեր մեշեն (անտառ), կտուրոյի մեր փեշեն (արհեստ, 153) – Օտար մարդը մտնելով անձանոթ միջավայր, օգտվում է տեղաբնիկների բարիքներից\*:

Երկու ոտները մի մաշիկ դնել (81) – Ստիպել:

Չոռով արջին կալ լծել չի լինի (Հուշիկներ.– Երկեր, 619) – Չես կամենում, չենք տա:

Էդ մի թևավորն էլ թողեք իմ ակնատի մեջն ընկնի (Յեցեր, 28) – Էդ մի աղջիկն էլ ինձ բաժին հասցրեք: Բնչ-որ բանից ես էլ օգտվեմ, շահ ունենամ\*:

Էծն իր ոտիցը կախ կտան, ոչխարն իր ոտիցը (Հունոն, 278) – Հունոյի դարդը մեզ չեն տվել:

Էս անտեր երեսը միս ու արյուն ա, դաբաղխանի կաշի հո չի (Յեցեր, 55) – - Կաշվի երես, անամոթ, անպատկառ<sup>54</sup>:

Էս մի հոգևորի կաքավն իմ թոռն ընկավ (55) – Մեկի ցանցի մեջ ընկնել<sup>55</sup>:

Էս ձիթհանքի օջախը նրան գունդ ու կծիկ ածի (128) – Խեղացնել:

Իմ խելքս ջուր չի խմում էդ տեսակ օրենքից (Յեցեր, 161) – Ես վերահասու չեմ այդ գործից (խելքս բան չի կտրում)\*:

Ի՞նչ ես փալանդ շուռ տվել (97) – Վիրավորել:

Ի՞նչ ես ձավար անում (117) – Ցնորաբանել:

Իրար օձիքից անընդհատ ձավար էին քաղում (Հուշիկներ, 623) – Իրար օձիք բաց չթողնել, իրար կտցել, վեճի մեջ լինել<sup>56</sup>:

Լավ ձին գարին կավելացնի, վատ ձին մտրակը (Պատմվածքներ, 423) – Խելոք մարդը բռնած գործից միշտ եկամուտով է դուրս գալիս, իսկ անխելքը՝ վնասով (խելոք գառը երկու մայր է ծծում)\*:

Լաշած հավի ծիծաղը կգա (Հունոն, 271) – Ասվում է վերին աստիճանի անիմաստ անհեթեթ խոսք, ասածը լսելու դեպքում<sup>57</sup>:

Լոզի գլուխը խալիչի վրա կենալ չի (337) – Չհասկացող, հիմար, երախտամոռ մարդու համար ինչքան լավ բան անես, չի հասկանա<sup>58</sup>:

Լուփո սուր է, բայց հանդը բաժանովի է (Հուշիկներ, 729) – Չորեղ, գորավոր<sup>59</sup>:

Լուփը քարին դեմ առավ (Յեցեր, 170) – Անականկալ արգելքի հանդիպել, գործը առաջ չգնալ, խափանվել<sup>60</sup>:

<sup>53</sup> Ա. Մ ու ը ք ի ա ս յ ա ն, Ս. Գ ա լ ս տ յ ա ն. ԴԲ, էջ 138:

<sup>54</sup> Նույն տեղում, էջ 312:

<sup>55</sup> Նույն տեղում, էջ 318:

<sup>56</sup> Նույն տեղում, էջ 255:

<sup>57</sup> Խ. Բ ա դ ի կ յ ա ն. ՈԻԴԲ, էջ 211

<sup>58</sup> Նույն տեղում, էջ 303:

<sup>59</sup> Ա. Մ ու ը ք ի ա ս յ ա ն, Ս. Գ ա լ ս տ յ ա ն. ԴԲ, էջ 297:

<sup>60</sup> Նույն տեղում, էջ 298:

Ծամուս ես, բերանն ես դնում, չեն ուզում կուլ տալ, կամենում են, որ մատով ներքն խցկենք (162) – Շատ մանրամասը մեկնել, բացատրել, մեկի գործը հեշտացնել, մեկի համար դյուրըմբռնելի դարձնել<sup>61</sup>:

Կամք տվինք (118) – Համաձայնվել:

Կատվին խաղ ա, մկանը մահ ա (82) – Մեկի կատակը, քմահաճույքը ուրիշին ցավ, վնաս, տուգանք պատճառել<sup>62</sup>:

Կաշառքը մութ տեղ լույս է տալիս (Հունոն, 308) – Կաշառքը ամենագոր է\*:

Կճուճը գլորվեց, խուփը գտավ (Յեցեր, 134) – Նմանը գնմանս կգտանե (արևմտահայ), այսինքն՝ յուրաքանչյուր մարդ իր որակի մարդու գտնում է և ընկերությունն անում\*:

Մաղի գլուխը մի բան գցել (169) – Հաջողացնել:

Մեղը ծախտողը մատը կլպստի (72) – Որևէ հիմնարկ - ձեռնարկությունում աշխատողը, որևէ գործի մասնակիցը կամ իրականացնողը լրացուցիչ օգուտ (շահ) կստանա<sup>63</sup>:

Մեր գալ Ափունի տղի շլինքը կարմիր նոխտա կապենք (116) – Նշան դնենք:

Մի ձեռք, որ չես կարող կտրիլ, պաշիր, դիր ճակատիդ (Հուշիկներ, 778) – Եթե մի վատ բանի չես կարող համակերպվել, ուրեմն պետք է այն ընդունես սիրով\*:

Խնամաքար դնել (Պատմվածքներ, 492) – Աղջկան ամուսնացնել կամենալ<sup>64</sup>:

Նոյյան ագռավի նման լեշով ընկնել (Յեցեր, 117) – Հատուկ հանձնարարությամբ մի տեղ գնալ ու չվերադառնալ<sup>65</sup>:

Շիշակ (100) – Երկու տարեկան խոյ:

Որ քաղաք մտել է՝ գուռնա փչելով իմ օձիքից է ձավար ժողովել (149) – Բամբասել:

Ոչ հեր անմեռ, ոչ որդի անպսակ (118) – Ոչինչ մնայուն չէ, ամեն ինչ անցողիկ է\*:

Պղինձը վեր ընկավ, չկոտրվեց, բայց ձենը վեր էլավ (170) – Որևէ վատ գործ եթե փորձանք էլ չբերի մարդու գլխին, այնուամենայնիվ, այն վատ համբավ կթողնի\*:

Ջուր ընկնողն անձրևից չի վախիլ (208) – Ավելի ծանր փորձանքի հանդիպած մարդը, թեթև փորձանքից չի վախենա\*:

Սատանին թարս նալել (Հունոն, 296) – Խաբել:

Սիրուն կաքավի քաղցր կողկողուն լսողի խելքն է տանում (328) – Հաճելի մարդը, իրողությունը, դուրեկան է բոլորին\*:

Սուփրեն գցած՝ բանն անհծած (277) – Ավելի կարևոր գործեր բռնելիս, երկրորդականները պետք է մի կողմ թողնել, անտեսել\*:

Տեսա՞ր՝ ոնց փորդ կատու գցեցի (Յեցեր, 82) – Ասվում է մեկին շահագրգռելու, մի բանի դրդելու դեպքում\*:

<sup>61</sup> Նույն տեղում, էջ 300:

<sup>62</sup> Նույն տեղում, էջ 315:

<sup>63</sup> Խ. Բ ա դ ի կ յ ա ն. ՈԻՂԲ, էջ 468:

<sup>64</sup> Ա. Մ ու ք ի ա ս յ ա ն, Ս. Գ ա լ ս տ յ ա ն. ԴԲ, էջ 288:

<sup>65</sup> Նույն տեղում, էջ 455:

*Տղամարդու բերանում լոբի չի թրջվիլ (Հուշիկներ, 731) – Բերանիցդ բաց չթողնես գաղտնիքը:*

*Ո՛ւմ գլխին ես գայլի ավետարաններ կարդում (Յեցեր, 81) – Ապարդյուն կերպով ջանալ մեկին ճանապարհի բերել՝ խրատել<sup>66</sup>:*

*Ուրբաթախոս (27) – Քչախոս, ամեն բանի ուշադրություն չդարձնող մարդ\*:*

*Փոքս սկսեց գլխիս չաքուճ կոտրել (Հուշիկներ, 659) – Սրբագանին սպասելով, քաղցս մոռացել էի, մինչև երեկո ոչինչ չկերա:*

*Փորումս լակ ձու կտրվեիր, աշխարհ չընկնեիր (Յեցեր, 65) – Չսաղմնավորվել, սաղմի անպտուղ դառնալ<sup>67</sup>:*

*Քարը վերցնենք, քարի տակը դնենք (118) – Ծածկել:*

*Քրդի կարպետ (119) – Հարյուր մանեթանոց թուղթ փողի անունն ա:*

*Ժողովրդական բանահյուսության վերոհիշյալ նմուշները սուկ պատառիկներ են գրողի ստեղծագործություններում օգտագործված հարուստ նյութերի ամբողջության մեջ:*

*Պ. Պռոշյանի ժողովրդագիտական ողջ ժառանգությունը գեղարվեստական խոսքի, ժողովրդական բանահյուսության ու ազգագրական նյութերի համադրման փայլուն օրինակ է: Ազգային կենցաղի, լեզվամտածողության, համ ու հոտի ինքնատիպության ուրույն դրսևորումները Պ. Պռոշյանի թողած հարուստ ժառանգությունում, հավանաբար, պայմանավորված են հենց այս հանգամանքով:*

## ОТРАЖЕНИЕ ЭТНОГРАФИЧЕСКИХ ДАННЫХ В ПРОИЗВЕДЕНИЯХ ПЕРЧА ПРОШЯНА

АНУШАВАН ПЕТРОСЯН

### Р е з ю м е

Художественная литература считается одним из важных источников этнографии. Особенно значима та художественная литература, авторы которой, выступая как бытописатели, подобно собирателям, записывали этнографические, фольклорные материалы и посредством художественной прозы раскрывали бытовые и культурные обычаи народа. В произведениях Перча Прошяна, в частности в романе “Цецер”, использованные этнографические и фольклорные данные относятся к семейному быту, к возрастным группам, и к другим сферам устного народного творчества. Однако приведенные материалы всего лишь частички сведений, отраженных в богатом наследии П. Прошяна, которое представляет собой яркий образец сочетания художественного слова, фольклора и этнографических данных.

<sup>66</sup> Նույն տեղում, էջ 132:

<sup>67</sup> Նույն տեղում, էջ 584:

REFLECTION OF ETHNOGRAPHIC DATA IN  
PERCH PROSHYAN'S WORKS*ANUSHAVAN PETROSSYAN*

## S u m m a r y

Fiction is considered to be one of the important sources of ethnography. It is especially significant, when authors, appearing as portrayers of ordinary life, like collectors, wrote down ethnographic, folk-lore materials and revealed living and cultural customs of people by means of prose. In Perch Proshyan's works, specifically in the novel "Tsetser", ethnographic and folk-lore data belong to family everyday life, age groups and other spheres of verbal folk art. However, the materials brought are only small parts of information reflected in P. Proshyan's rich heritage, which is a bright example of combination of artistic word, folk-lore and ethnographic data.